

**ԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ**

**Ռոզա Ավագյան  
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ  
Արցախ**

**Անոտացիա:** Սույն հետազոտության նպատակն է՝ պարզել ԱՀ բնակչության կրթության աստիճանի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: Այդ նպատակով կիրառել ենք մասերի համեմատության վարկածների ստուգման մեթոդը, որն իրականացվել է Ստյուդենտի t չափանիշի միջոցով: 2014թ.-ի տվյալներով միայն տարրական և հիմնական կրթություն ունեցողների խմբում աղքատության մակարդակների միջև տարբերությունն էական չէ: Մյուս դեպքերում, ինչպես նաև 2015թ.-ին՝ կրթական տարբեր խմբերում աղքատության մակարդակների տարբերությունը էական է:

**Բանալի բառեր՝** աղքատության մակարդակ, կրթության աստիճան, վիճակագրական համակցություն, մասերի համեմատություն:

Ակնհայտ է, որ բնակչության կենսամակարդակը ուղղակիորեն կապված է բնակչության կրթության, գրագիտության աստիճանի հետ:

Սույն հետազոտության նպատակն է՝ պարզել ԱՀ բնակչության կրթության աստիճանի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: ԱՀ ԱՎԾ-ն տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության շրջանակներում 2014-2015թթ. կտրվածքով ուսումնասիրել և հրատարակել է նաև բնակչության աղքատության մակարդակն ըստ կրթական աստիճանի:

Աղյուսակ 1

ԱՀ բնակչության աղքատության աստիճանն ըստ կրթական մակարդակի 2014-2015թ.

Կրթություն	2014թ.			2015թ.		
	Աղքատության դրուժանական մակարդակը, %	16տ.-ից բարձր բնակչությունը, հազար մարդ	Տեսակարար կշիռը 16տ.-ից բարձր բնակչության մեջ	Աղքատության դրուժանական մակարդակը, %	16տ.-ից բարձր բնակչությունը, հազար մարդ	Տեսակարար կշիռը 16տ.-ից բարձր բնակչության մեջ
Տարրական և ցածր	34,1	2,8	2,6	21,7	2,5	2,3
Թերի միջնակարգ	35,0	13,5	12,5	29,5	12,9	12,0
Միջնակարգ ընդհանուր	26,0	36,3	33,5	24,0	40,7	38,0
Միջնակարգ մասնագիտական	22,4	28,7	26,5	19,8	25,8	24,1
Բարձրագույն	19,4	27,0	24,9	14,5	25,3	23,6

Ըստ կրթական աստիճանի ԱՀ բնակչության աղքատության մակարդակի տարբերությունները գնահատելու համար կիրառել ենք մասերի համեմատության վարկածների ստուգման մեթոդը: Զրոյական վարկած է ընդունվում ըստ առանձին կրթական աստիճանի աղքատության մակարդակների (գործակցով արտահայտված) միմյանց հավասար լինելը ( $H_0 : P_1 = P_2$ ), իսկ որպես մրցակցող վարկած ընդունվում է դրանց անհավասար լինելը (միակողմանի տիբրոյթ),  $H_1 : P_1 < P_2$ : Զրոյական վարկածն ստուգվում է Ստյուդենտի t չափանիշով, որի փաստացի արժեքն որոշվում է հետևյալ կերպ՝

$$t_{act} = \frac{w_1 - w_2}{\sigma_{w1-w2}} \quad (1),$$

$$\sigma_{w1-w2} = \sqrt{p(1-p)\left(\frac{1}{n_1} + \frac{1}{n_2}\right)} \quad (2),$$

$$p = \frac{w_1 n_1 + w_2 n_2}{n_1 + n_2} \quad (3),$$

որտեղ՝

$w_1; w_2$  - առաձին խմբերի մասերն են,

$\sigma_{w1-w2}$  - մասերի տարբերության միջին քառակուսային շեղումն է,

$n_1; n_2$  - խմբերի ծավալներն են [3, էջ 198]:

Համեմատական վերլուծությունն իրականացվել է կրթական աստիճանի յուրաքանչյուր խմբի համար առանձին-առանձին:  $\alpha = 0.05$  նշանակալիության մակարդակով գրոյական վարկածն մերժվում է, երբ  $t_{act} > t_{crit}$  ( $t_{crit(\alpha=0.05; k>1000)} = 1.64$ ), այսինքն 16 տարեկանից բարձր ԱՀ բնակչության կրթական տարբեր խմբերում աղքատության մակարդակների տարբերությունը կարելի է համարել նշանակալի: 2014թ.-ի համար կատարված հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ըստ ԱՀ բնակչության կրթական աստիճանի աղքատության մակարդակների համեմատության տ չափանիշի փաստացի արժեքները 2014թ.-ի տվյալներով

Խմբերը	Տարրական և ցածր	Թերի միջնակարգ	Միջնակարգ ընդհանուր	Միջնակարգ մասնագիտական
Տարրական և ցածր	-	-	-	-
Թերի միջնակարգ	$t_{act} = 0,909$	-	-	-
Միջնակարգ ընդհանուր	$t_{act} = 9,34$	$t_{act} = 19,79$	-	-
Միջնակարգ մասնագիտական	$t_{act} = 13,94$	$t_{act} = 27,34$	$t_{act} = 10,61$	-
Բարձրագույն	$t_{act} = 18,24$	$t_{act} = 34,36$	$t_{act} = 10,61$	$t_{act} = 19,46$

Աղյուսակ 2-ում բերված վերլուծության արդյունքից հետևում է, որ 16 տարեկանից բարձր ԱՀ բնակչության միայն տարրական, ցածր և թերի միջնակարգ կրթություն ունեցողների խմբում աղքատության մակարդակների միջև տարբերությունները էական չեն ( $t_{act} = 0,909 < t_{crit(\alpha=0.05; k>1000)} = 1,64$ ):

Մյուս դեպքերում ( $t_{act} > t_{crit(\alpha=0.05; k>1000)} = 1,64$ ) 16 տարեկանից բարձր ԱՀ բնակչության տարբեր կրթական աստիճանների խմբերում աղքատության մակարդակների միջև տարբերությունն էական է:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2015թ.-ի համար կատարված հաշվարկների արդյունքները:

Աղյուսակ 3

Ըստ ԱՀ բնակչության կրթական աստիճանի աղքատության մակարդակների համեմատության տ չափանիշի փաստացի արժեքները 2015թ.-ի տվյալներով

Խմբերը	Տարրական և ցածր	Թերի միջնակարգ	Միջնակարգ ընդհանուր	Միջնակարգ մասնագիտական
Տարրական և ցածր	-	-	-	-
Թերի միջնակարգ	$t_{act} = 7,929$	-	-	-

Միջնակարգ ընդհանուր	$t_{act} = 2,618$	$t_{act} = 12,517$	-	-
Միջնակարգ մասնագիտակա ն	$t_{act} = 2,269$	$t_{act} = 21,364$	$t_{act} = 12,664$	-
Բարձրագույն	$t_{act} = 9,579$	$t_{act} = 34,95$	$t_{act} = 29,469$	$t_{act} = 15,882$

Աղյուսակ 3-ում բերված վերլուծության արդյունքներից երևում է, որ 16 տարեկանից բարձր ԱՀ բնակչության կրթական աստիճանի բոլոր խմբերում աղքատության մակարդակների տարբերությունն էական է ( $t_{act} > t_{crit}(\alpha=0.05; k>1000) = 1,64$ ):

Վերլուծությունները ևս մեկ անգամ ապացուցում են, որ բնակչության գրագիտության և կրթվածության աստիճանը այն կարևոր գործոններից է, որը թույլ է տալիս վազեցնել աղքատության մակարդակը, հետևաբար՝ բարձրացնելով բնակչության կենսամակարդակը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական ժողովածու 2016», վիճակագրական ժողովածու, ԱՀ ԱՎԾ, Ստեփ., 2016:
2. ԱՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական և վերլուծական զեկույց, ըստ 2015թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, Ստեփ., 2016:
3. Теория статистики: Учебник /Под ред, проф. Г.Л. Громыко, 2-е изд., перераб. и доп., – М., 2005, 476 с.

### РЕЗЮМЕ

#### Статистический анализ уровня бедности населения Республики Арцах в зависимости от уровня образования Роза Авагян

**Ключевые слова:** уровень бедности, уровень образования, статистическое сочетание, сравнение частей.

Цель данного исследования - выяснить влияние уровня образования населения Республики Арцах на уровень бедности. Для этой цели мы провели частичное сравнение гипотезы методом критерия t Студент. Согласно данным, различия между уровнями бедности в группе начального и основного образования в 2014 г. незначительны. В других случаях, в 2015 г. различия являются значительными в разных группах образования.

### SUMMARY

#### The Statistical Analysis of the RA Population Poverty Level according to the Level of Education Roza Avagyan

**Keywords:** level of poverty, level of education, statistical population, the comparison of share.

The main purpose of the article is to disclose the influence of the level of education of the population of the RA on the level of poverty. To test the hypothesis we have applied **t Students'** test. According to the data in 2014 the difference of poverty level between the groups of elementary and secondary education was insignificant. In the rest cases, as well as in 2015, the difference between all groups of education regarding poverty levels were significant.